Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գագիկ Գրիգորյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Գագիկ Գրիգորյան:

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2017թ. դեկտեմբերի 21-ից 22-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի տնօրենների խորհուրդ:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

Մասնակցություն «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նիստին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2017թ. դեկտեմբերի 22-ին ք. Մոսկվայում կայացել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նիստը:

Նիստի ընթացքում քննարկվել է ընկերության 2017 թվականի առաջին 9 ամիսների գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

Քննարկվել են նաև մի շարք հարցեր ընկերության բիզնես ծրագրերի, պայմանագրերի իրականացման ընթացքի, կադրային և վարկային քաղաքականության, սոցիալական ծրագրերի, ապահովագրության պաշտպանության, տնօրենների խորհրդի որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ:

Միջոցառման շրջանակներում քննարկվել են «ՀԿԵ» ՓԲԸ-ի գործունեության զարգացման հայեցակարգի մշակման և դիվերսիֆիկացիայի, ինչպես նաև շարժիչավագոնային շարժակազմի արդիականացման հետ կապված հարցեր:

«ՀԿԵ» ՓԲԸ-ի աուդիտորական հանձնաժողովի կողմից ներկայացվել են դիտողություններ՝ 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքների ու դրանց շտկման անհրաժեշտության վերաբերյալ:

Նիստի ընթացքում հաստատվել է ընկերության 2018 թվականի բյուջեն, ինչպես նաև 2018-2020թթ. ներդրումային ծրագիրը:

«ՀԿԵ» ՓԲԸ-ին հանձնարարվել է 2018թ. համար մշակել ընկերության աշխատակիցների աշխատանքի խթանմանն ուղղված միջոցառումների ցանկ և դրա վերաբերյալ նախապատրաստված փաստաթղթերի փաթեթը սահմանված կարգով ներկայացնել «ՀԿԵ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի հաջորդ նիստին:

Նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև նախորդ նիստի ընթացքում քննարկված մի շարք հարցերի և ծրագրերի կատարման ընթացքին, մասնավորապես՝ ընկերության կողմից տեղական երկաթուղային հաղորդակցություններով ուղևորների սպասարկման շարժակազմի թարմացման և շարժիչավագոնային շարժակազմի արդիականացման ծրագիրին, որոնք պետք է ներառվեն 2018թ. բյուջեում:

Նիստի վերջում՝ «ՀԿԵ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամների քվեարկության արդյունքում, հաստատվել է «ՀԿԵ» ՓԲԸ-ի գործունեության զարգացման և դիվերսիֆիկացիայի հայեցակարգի ձևավորման միջոցառումների ծրագիրը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

  Գագիկ Գրիգորյան

  29.12.2017թ.